# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**16 մայիսի 2025 թվական, N 87-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԼՃԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.04 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխով, 618-րդ հոդվածի 2-րդ կետով, 622-րդ հոդվածով, հաշվի առնելով այն փաստը, որ այգու տարածքը համարվում է ընդհանուր օգտագործման հողամաս, հիմք ընդունելով լճերի այգում նախատեսված քաղաքաշինական ծրագիրը, վերակառուցման, բարեկարգման անհրաժեշտությունը, վարձակալության իրավունքի 09/03/2004թ. N 0078079 վկայականը, 2004թվականի փետրվարի 13-ին կնքված հողի վարձակալության պայմանագիրը /N 153/.

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաշվի առնելով համայնքի և համայնքի հանրության շահը՝ տալ համաձայնություն վաղաժամկետ լուծելու Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի դեկորատիվ լճի արևմտյան մասում գտնվող 0.04 հա մակերեսով հողամասի 2004 թվականի փետրվարի 13-ին Հարություն Շոլինյանի հետ կնքված վարձակալության պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին հանձնարարել՝ առաջարկել Հարություն Շոլինյանին հողի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, վերջինիս անհամաձայնության դեպքում պահանջը ներկայացնել դատական կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 11. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 15. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 16,
Լոռու մարզ, ք. Ալավերդի